ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան

30.03.2023թ.

1. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ նաև՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2023 թվականի մարտի 30-ի հերթական նիստին.

ա) մասնակցում էին՝

Վ. Քերոբյան	– ՀՀ էկոնոմիկայի նախարար, Խորհրդի նախագահ
Ա. Հարությունյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ
Է.Հակոբյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ
Լ.Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ
Է. Էլբակյան	- ՀԱՊՀ մինչբուհական կրթության գծով պրոռեկտոր , Խորհրդի անդամ
Կ. Չիլինգարյան	- «Սպառողների խորհրդատվության կենտրոն» նախագահ, Խորհրդի անդամ
Տ. Քեյան	- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի աջակցության ծրագրերի ղեկավար, Խորհրդի անդամ
Ա. Կոտոյան	– Տեսչական մարմնի ղեկավար
Ա. Մկրտչյան	– Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ
Ա. Սարգսյան	- Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ
Գ. Սահակյան	- Խորհրդի քարտուղար

բ) բացակայում էին՝

Ն. Տերյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Ա. Դանիելյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար, Խորհրդի անդամ

Կ.Սահակյան - ԵՊՀ դասախոս, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, Խորհրդի անդամ

Հերթական նիստի օրակարգային հարցեր.

2. Օրակարգում ընդգրկված հարցերն են՝

1. Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում:
   Զեկուցող՝ Ա.Կոտոլյան

2. Հավանություն տալ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023թ. 1-ին եռամսյակի ընթացքում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների վերաբերյալ հաշվետվությանը:
   Զեկուցող՝ Ա.Կոտոլյան

3. Հավանություն տալ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի (ծածկագիրը՝ 69-27.4-Ղ3-1) փոփոխությանը:
   Զեկուցող՝ Ա.Կոտոլյան

4. Հավանություն տալ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկի փոփոխությանը:
   Զեկուցող՝ Ա.Կոտոլյան

5. Հավանություն տալ այսուհետ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում և անվանացանկում կատարվող փոփոխություններին:
   Զեկուցող՝ Ա.Կոտոլյան

6. ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ կայանալիք նիստի ամսաթիվը համաձայնեցնելու մասին:
   Զեկուցող՝ Ա.Կոտոլյան

3. Քննարկվեց օրակարգի հարց՝ նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում.

Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ օրակարգային հարցը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանը: Ա.Կոտոյանը, նախ անդրադարձ կատարեց Տեսչական մարմնի գործառույթների թվայնացմանը և հայտնեց, որ արդեն կազմվել է դրա վերաբերյալ ճանապարհային քարտեզը և ներկայացվել է նախարարություն քննարկման:

Նախարար Վահան Քերոբյանը նշեց, որ տեսչական մարմինների հաշվետվությունների ներկայացման ժամանակ բոլոր տեսչական մարմինները նշել են, որ թվայնացման գործընթացը շատ կարևոր և պահանջված է բոլորի համար: Սակայն, թվայնացման գնալը միայն մեկ մարմնից կախված չէ, իսկ դրա բազային հիմքը էլեկտրոնային նույնականացման քարտերի ներդնումն է:

Ա.Կոտոյանը նաև հայտնեց, որ քննարկում է ունեցել Ազգային ժողովում էլեկտրոնային եղանակով նամակների/ծանուցումների ուղարկման մասին, որպեսզի դրանք էլ.եղանակով ուղարկելու դեպքում համարվեն ուղարկված և պատշաճ ծանուցված:

Վ.Քերոբյանը նաև հավելեց, որ թվայնացման գրասենյակի հետ քննարկում են ունեցել յուրաքանչյուր գերատեսչությունում թվայնացման պատասխանատու ունենալու նպատակով և առաջարկեց այդպիսի հաստիք ավելացնել: Ա.Կոտոյանը նշեց, որ այդ մասնագետի կարիքը կա, սակայն Տեսչական մարմինը չունի:

Հաջորդը, Վ.Քերոբյանը անդրադարձ կատարեց շուկայում առկա անորակ ավտոդուղերի վերաբերյալ խնդրին և կատարված աշխատանքներին, որին ի պատասխան Ա.Կոտոյանը հայտնեց, որ սպասում են էկոնոմիկայի նախարարությունից տվյալ ոլորտում տնտեսվարողների ցանկի ներկայացմանը և նշեց, որ Տեսչական մարմինը հետաքրքրվել է թե այդ ոլորտում որ հասցեներում են առավել ռիսկային: Տ.Քեյանն էլ հավելեց, որ պետք է ուշադրություն դարձնել առավել շատ մարզերի լցակայաններին:

Օրակարգի հաջորդ հարցերին մինչև անցում կատարելը, Ա.Կոտոյանն առաջարկեց նախ անդրադառնալ 5-րդ հարցին, քանի որ եթե այն ընդունվի, ապա 3-րդ և 4-րդ

հարցերը ածանցյալ հարցեր են և այլևս դրանց անդրադառնալու անհրաժեշտություն չի լինի:

Վ.Քերոբյանը առաջարկեց քննարկել Օրակարգի 2-րդ հարցը, լրամշակել մարտի 30-31 օրերի տվյալներով և ներկայացնել օնլայն քվերակության, քանի որ վերաբերում է ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023թ. 1-ին եռամսյակի ընթացքում թեժ գծով ստացված հեռախոսազանգերին և դիմում-բողոքներին և եթե տվյալները նիստում հաստատվի 30.03.2023թ. դրությամբ, հաջորդ երկու օրվա տվյալները դրանում չեն արտացոլվի:

Որոշվեց միաձայն՝ այն օրակարգի հարցերից հանել:

4. Քննարկվեց օրակարգի հարց՝ այսուհետ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում և անվանացանկում կատարվող փոփոխություններին հավանություն տալու մասին.

Այսուհետ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում և անվանացանկում կատարվող փոփոխություններին հավանություն տալու մասին օրակարգային հարցը զեկուցեց Արմեն Կոտոյանը, մանրամասն ներկայացնելով նշված հարցի ընդունման անհրաժեշտությունը, նշելով այն, որ Տեսչական մարմնի պաշտոնի անձնագրերում կամ անվանացանկում փոփոխություններ կատարելը յուրաքանչյուր անգամ նպատակահարմար չէ խորհրդի օրակարգ մտցնել և ծանրաբեռնել այդ հարցերով խորհրդին, քանի որ դրանցում կատարվող փոփոխությունները նաև նախապես համաձայնեցված են լինում ինչպես Վարչապետի աշխատակազմի, այնպես էլ քաղ.ծառայության գրասենյակի հետ:

Ա.Հարությունյանը հետաքրքրվեց թե նմանատիպ փոփոխություններ անձնագրերում որքան հաճախ են իրականացվում և արդյոք այն կդիտվի որպես խորհրդին ծանրաբեռնում:

Ա.Մկրտչյանը արձագանքելով հարցին նշեց, որ նմանատիպ փոփոխությունները հաճախ չեն լինում, սակայն լինում են ժամկետների հետ կապված խնդիրներ, դրանց շուտափույթ լուծում տալու հարցն է, բայց ամեն անգամ հնարավոր չէ մի քանի օրվա ընթացքում խորհրդի նիստ կազմակերպել միայն այդ հարցի քննարկման համար:

Ա.Կոտոյանը նաև հայտնեց, որ Տեսչական մարմնում առկա 4 թափուր հաստիք պետք է փոփոխվեն որպես Տեսչական մարմնի շենքի պահակակետում աշխատող պահակների հաստիքներ, որպեսզի յուրաքանչյուր տարի մրցույթ չհայտարարվի և հաստիքային աշխատողներ լինեն, իսկ հետագայում եթե համալրման կարիք լինի Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի հետ պայմանավորվածություն ունեն 2 հաստիք Շուկայի վերահսկողության տեսչական մարմնին տալու վերաբերյալ, քանի որ երկու տեսչական մարմինները գտնվում են մեկ ընդհանուր շենքում և դրա սպասարկումը իրականացվելու է 4 հաստիքով, յուրաքանչյուր տեսչականից 2 հաստիք կզբաղեցվի:

Վ.Քերոբյանը նշեց, որ կողմ է Տեսչական մարմնին նշված հարցով ազատություն տալուն, իսկ Ա.Կոտոյանը առաջարկեց եռամսյակային հաշվետվություններում այս մասով իրականացված փոփոխությունները ներառել և ներկայացնել խորհրդին եթե խորհուրդը անհրաժեշտություն կտեսնի:

Լ.Նանուշյանը ևս արձագանքեց և հայտնեց, որ խորհուրդը պետք է ստրատեգիական հարցերով զբաղվի և կողմ է նշված օրակարգային հարցին:

Որոշվեց միաձայն՝ հավանություն տալ այսուհետ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում և անվանացանկում կատարվող փոփոխություններին:

5. Քննարկվեց օրակարգի հարց՝ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023թ. 1-ին եռամսյակի ընթացքում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների վերաբերյալ.

Թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն ներկայացրեց Ա.Մկրտչյանը, ով հայտնեց, որ Տեսչական մարմնի թեժ գծին ստացված հեռախոսազանգերի հիմնական մասը Տեսչական մարմնի լիազորություններից դուրս ուղղված հարցեր են և վերաբերում են ապրանքների հետվերադարձին: Ա.Կոտոյանը հայտնեց, որ ՏԻՄ-երի մեծ մասը տեղյակ չէ, որ հետվերադարձի հարցը իրենց լիազորությունների տիրույթում է, իսկ Ա.Հարությունյանը ևս նշեց, որ իրազեկման խնդիր կա այս մասով:

Տ.Քեյանն էլ առաջարկեց սոցիալական գովազդի միջոցով կատարել իրազեկում, իսկ Վ.Քերոբյանը առաջարկեց բոլոր ՏԻՄ-երի հետ հանդիպում կազմակերպել և իրազեկել այս մասին, որին վերջինս ևս կմիանա:

Ա.Մկրտչյանը նշեց, որ մի քանի անգամ նախորդ տարիների համեմատ նվազել են թերլիցքավորման վերաբերյալ բողոքները: Ա.Մկրտչյանը նշեց նաև, որ հանրությունից ստացված բողոքների քննարկման և ընթացք տալու կարգը շատ խիստ է, իսկ Ա.Կոտոյանը հայտնեց, որ ԱԺ-ում ունեցել է հանդիպում և քննարկել է թեժ գծով ստացված զանգերի հիման վրա ստուգում իրականացնելու հնարավորությունը: Նշեց, որ Տեսչական մարմինը նախագիծ է ներկայացրել դրա վերաբերյալ:

Վ.Քերոբյանը հետաքրքրվեց թե Տեսչական մարմինը դիտարկման գործառույթ ունի, թե ոչ, որի վերաբերյալ Ա.Կոտոյանը նշեց, որ Տեսչական մարմնի մասին օրենքով այն առաջարկվել է և դիտում է որպես լավ գործիք, սակայն չի ընդունվել առաջարկը: Վ.Քերոբյանը ևս նշեց, որ դիտարկումը կարևոր գործիք է հանդիսանում:

Տ.Քեյանը հարց ուղղեց այն մասին, թե Տեսչական մարմնի ունեցած ռեսուրսները հերիք են, որպեսզի ամեն զանգի հիման վրա սուգում իրականացվի, որին Ա.Կոտոյանը պատասխանեց, որ տվյալ դեպքում Տեսչական մարմինը ստուգումների տարեկան ծրագրով նախատեսվող ստուգումների քանակը կարող է կրճատել և որոշակի տոկոս հատկացնել զանգերի, դիմում-բողոքների հիման վրա իրականացող ստուգումներին:

Ա.Մկրտչյանը նշեց, որ գրավոր բողոքների ևս 70 տոկոսը Տեսչական մարմնի գործառույթներին չվերաբերող հարցեր են, նաև նշեց, որ 2023թ.-ի առաջին եռամսյակում իրականացվել է 1345 էլ.իրազեկում, 362 տնտեսվարող իրազեկվել են օծանելիքակոսմետիկական արտադրանքի տեխ.կանոկարգի փոփոխությունների մասին, իսկ Երևան քաղաքում 755 տնտեսվարող իրազեկվել է ծխախոտային արտադրանքների վերաբերյալ օրենսդրությամբ ներկայացվող պահանջների պահպանման մասին:

Ա.Կոտոյանը նշեց, որ առկա է խնդիր անոթների ստուգաչափման գների հետ կապված և տնտեսվարողները բողոքում են դրա թանկ լինելուց:

Իսկ Կ.Չիլինգարյանը բարձրաձայնեց օնլայն հարթակում գնված ապրանքների վերաբերյալ խնդրին և նշեց, որ շատ են խախտումները այդ ոլորտում:

6. Քննարկվեց օրակարգի հարց՝ Հայաստանի Հանրպետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ կայանալիք նիստի ամսաթիվը համաձայնեցնելու մասին.

Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ հերթական նիստը անցկացնել 2023թ. մայիսի 25-ին, ժամը՝ 14:00-ին, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունում՝ ք.Երևան, Միհեր Մկրտչյան 5 շենք հասցեում:

Խորհրդի նախագահ՝

_____ Վ.Քերոբյան

ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝

_____ Գ.Սահակյան

ստորագրություն